



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ № 38Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՍԲ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ դատական օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատարանների նախագահների խորհուրդը մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 1-ը հաշվարկում է հաջորդ երկու տարվա ընթացքում առաջին ատյանի դատարանում դատավորների թափուր պաշտոնների համալրման համար անհրաժեշտ քանակը և դրա հիման վրա որոշում է կայացնում դատավորների թեկնածությունների ցուցակի համապատասխան մասնագիտացմամբ բաժնի համալրման անհրաժեշտության մասին, եթե դատավորների թեկնածությունների ցուցակում առկա թեկնածուների քանակը համապատասխանաբար քրեական և քաղաքացիական մասնագիտացմամբ բաժնում չի գերազանցում հաջորդ երկու տարում թափուր պաշտոնների կանխատեսվող քանակը 4-ով, իսկ վարչական մասնագիտացմամբ բաժնում՝ 2-ով»:

Ներկայումս գործող դատավորների թեկնածությունների ցուցակում, ըստ համապատասխան մասնագիտացմամբ բաժինների, առկա են՝ քաղաքացիական մասնագիտացմամբ բաժնում՝ 8 թեկնածու, քրեական մասնագիտացմամբ բաժնում՝ 5 թեկնածու, վարչական մասնագիտացմամբ բաժնում՝ 4 թեկնածու:

ՀՀ դատարանների նախագահների խորհուրդն արձանագրում է, որ առաջիկա երկու տարում թոշակի է անցնելու քաղաքացիական գործեր քննող 9, քրեական գործեր քննող 3 և վարչական գործեր քննող 1 դատավոր, իսկ 2017 թվականի սեպտեմբեր ամսից մինչև դեկտեմբեր ամիսը թոշակի են անցնելու քրեական մասնագիտացմամբ և վարչական մասնագիտացմամբ մեկական դատավորներ: Բացի այդ, սույն որոշման ընդունման պահին դատական համակարգում առկա է դատավորի 4 թափուր հաստիք, որից 1-ը՝ քաղաքացիական մասնագիտացմամբ, 3-ը՝ քրեական մասնագիտացմամբ:

Միաժամանակ հարկ է նշել, որ մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններից մեկի քրեական մասնագիտացմամբ դատավորը դիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհուրդ՝ խնդրելով դադարեցնել իր լիազորությունները՝ այլ աշխատանքի անցնելու կապակցությամբ:

Այսպիսով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատավորների թեկնածությունների ցուցակում առկա թեկնածուների քանակը համապատասխանաբար քրեական և քաղաքացիական մասնագիտացմամբ բաժիններում չի գերազանցում հաջորդ երկու տարում թափուր պաշտոնների կանխատեսվող քանակը 4-ով, ուստի անհրաժեշտ է համալրել դատավորների թեկնածությունների ցուցակի քաղաքացիական և քրեական մասնագիտացմամբ բաժինները:

ՀՀ դատական օրենսգրքի 115-րդ հոդվածի 1.1-ին մասի համաձայն՝ «Դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման համար անհրաժեշտ թեկնածուների քանակի հաշվարկը կատարվում է հաջորդ երկու տարվա ընթացքում քրեական և քաղաքացիական մասնագիտացմամբ բաժիններում համալրման համար անհրաժեշտ քանակը 2 թեկնածուով, իսկ վարչական մասնագիտացմամբ բաժնում՝ 1 թեկնածուով գերազանցող քանակի հաշվարկով»:

Վերոգրյալի արդյունքում ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը գտնում է, որ անհրաժեշտ է դատավորների թեկնածությունների ցուցակի քաղաքացիական մասնագիտացմամբ բաժինը համալրել 4 թեկնածուով, իսկ քրեական մասնագիտացմամբ բաժինը՝ 5 թեկնածուով՝ հիմքում դնելով հետևյալ հաշվարկը.

1) քաղաքացիական մասնագիտացում - (1 /ներկայումս առկա թափուր պաշտոնների քանակ/ + 0 /2017թ. կանխատեսվող թափուր պաշտոնների քանակ/ + 6 /2018թ. կանխատեսվող թափուր պաշտոնների քանակ/ + 3 /2019թ. կանխատեսվող թափուր պաշտոնների քանակ/ + 2 /ՀՀ դատական օրենսգրքի 115-րդ հոդվածի 1.1-ին մասի պահանջ/) – 8 /ներկա պահին ցուցակում առկա թեկնածուների քանակ/).

2) քրեական մասնագիտացում - (3 /ներկայումս առկա թափուր պաշտոնների քանակ/ + 2 /2017թ. կանխատեսվող թափուր պաշտոնների քանակ/ + 0 /2018թ. կանխատեսվող թափուր պաշտոնների քանակ/ + 3 /2019թ. կանխատեսվող թափուր պաշտոնների քանակ/ + 2 /ՀՀ դատական օրենսգրքի 115-րդ հոդվածի 1.1-ին մասի պահանջ/) – 5 /ներկա պահին ցուցակում առկա թեկնածուների քանակ/):

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ դատական օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասը՝ ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման անհրաժեշտ թվաքանակը, համապատասխանաբար՝

- ✓ քաղաքացիական մասնագիտացմամբ բաժին՝ չորս թեկնածու,
- ✓ քրեական մասնագիտացմամբ բաժին՝ հինգ թեկնածու:

**Հայաստանի Հանրապետության
դատարանների նախագահների
խորհրդի նախագահ**

2017թ. օգոստոսի 31
ք.Երևան

Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ